



ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ
ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ **2018**

ԱՐԺԵՎՈՐԵԼ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ՝ ՆՇԱՆԱԿԵՏԻՆ
ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ԱԿՆԱՐԿ

ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2018թ II եռամսյակի ընթացքում Ամերիաբանկը վերահաստատեց առաջատարի իր դիրքը՝ 693.5 մլրդ ՀՀ դրամի ակտիվներով: Հատկանշական է, որ ըստ ակտիվների Բանկը եղել է համակարգի առաջատարը 2013թ 1-ին եռամսյակից ի վեր: 2018թ II եռամսյակի վերջի դրությամբ Ամերիաբանկը ՀՀ բանկային համակարգի անվիճելի առաջատարն է բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով: Վարկային պորտֆելը (ներառյալ լիպինգը և ֆակտորինգը) կազմել է 492.3 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները՝ 608.2 մլրդ ՀՀ դրամ:

Ամերիաբանկի կապիտալն աճել է 21.9%-ով՝ կազմելով 85.3 մլրդ ՀՀ դրամ: 2018թ II եռամսյակին: Բանկի չուտ շահույթը կազմել է 5.9 մլրդ ՀՀ դրամ:

Չորրորդ տարին անընդմեջ Ամերիաբանկն առաջատարն է ըստ ակտիվների, վարկերի և պարտավորությունների:

մլն ՀՀ դրամ	2017	30.06.2018	Աճ (%)
Ընդհանուր ակտիվներ	677,772	693,492	2.3%
Ընդհանուր կապիտալ	69,941	85,293	21.9%
Վարկեր	475,519	492,315	3.5%
Պարտավորություններ	607,781	608,199	0.1%
Զուտ Շահույթ ¹	3,341	5,928	77.4%

ԱԿՆԱՐԿ

ՄԱՆՐԱԾԱԽ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին տարիների ընթացքում Ամերիաբանկի մանրածախ բիզնեսն ունի կայուն և արագանցիկ աճի տենդենց և համարվում է բանկի կարևոր ռապիդարական ուղղություններից մեկը:

Այսօր արդեն, որպես լիարժեք մանրածախ բանկ, Ամերիաբանկը շուկայի հիմնական սեգմենտների առաջատարն է և շարունակում է ամրապնդել իր դիրքը:

2018թ. բանկը շարունակում էր իր գործունեության թվայնացման գործընթացը, որի նպատակն է դրակապես փոխել սպասարկման մոդելը: Նախորդ տարի ներդրված առցանց դիմելու և առցանց վարկեր ստանալու հնարավորությունը մեծ դրական արձագանք ստացավ հաճախորդների շրջանում, ինչի արդյունքում էակտորեն մեծացել է բանկի սպառողական վարկերի պորտֆելը: Ներկայումս բանկն իրականացնում է թվայնացման աշխատանքներ այլ ուղղություններով ևս՝ նպատակ ունենալով հաճախորդներին առաջարկել լավագույն փորձառություն և արագ սպասարկում:

Սպասարկման լայն ցանց

Սպասարկման բավակողմանի ցանցը վարձացնելու նպատակով բանկը նախաձեռնել է մասնաձյուղերի ցանցի ընդլայնման ծրագրեր, մասնավորապես՝

- Բացվեց նոր «Ջերմուկ» մասնաձյուղը
- Տեղափոխվելով նոր գլխամասային գրասենյակ՝ բացվեց նաև նոր «Կամար» մասնաձյուղը, որը խորհրդանշում է ավանդույթների և նոր տեխնոլոգիաների համադրությունը: Ընդարձակ և հարմարավետ սրահը հնարավորություն է տալիս հաճախորդներին առաջարկել բարձր որակի սպասարկում: Մասնաձյուղին կից գործում է 24/7 ինքնասպասարկման սրահը:

Ամերիաբանկը շարունակաբար աշխատում է տեխնոլոգիաների վարձացման ուղղությամբ: 2018 թվականի առաջին կեսի ընթացքում Բանկը սկսել է համագործակցությունը Իդրամ, Մոբիդրամ, ԻվիՓեյ ընկերությունների հետ՝ առաջարկելով հաճախորդներին իրականացնել կանխիկի մուտքագրումներ իրենց առավել հարմար եղանակով: Մեր նպատակն է բարելավել սպասարկումը, անհատականացնել հաճախորդների տարբեր խմբերին առաջարկվող ծառայությունները և հաճախորդի համար բանկային գործառնությունների իրականացումը դարձնել հնարավորապես հեշտ ու արագ:

Թվայնացման ճանապարհին սպասարկման կարևորագույն գործիքներից է բանկի Կոնտակտային կենտրոնը: 2018թ. Ամերիաբանկը շարունակական աշխատում է Կոնտակտային կենտրոնի միջոցով մատուցվող ծառայությունների ցանկը ընդլայնելու ուղղությամբ՝ ծածկելով գրեթե բոլոր ծառայությունները ներառելով վարկավորումը:



ԱԳՄ
120



Վիճուղայ
ՔՕՏ տեղումնայ
308



ՔՕՏ
տեղումնայ
1,730



ՔՕՏ
կանխիկի
տեղումնայ
51



Գլխամասային
գրասենյակ և
մասնաճյուղեր
երևան
մարզեր **10**
6



Նոր պրոդուկտներ և ծառայություններ

Ամերիաբանկը ներդրեց նոր Ապառիկ վարկավորման ծառայությունը: Ծառայության առավելություններից է արագությունը՝ վարկի որոշման կայացումն ու տրամադրումն իրականացվում է հաշված րոպեների ընթացքում: Այս պահին բանկն արդեն համագործակցում է ավելի քան 30 ընկերությունների հետ՝ առաջարկելով ծառայությունը ավելի քան 500 կետերում:

2018 թվականին ներդնելով օնլայն վարկավորման գործիքը՝ բանկն առաջարկում է սպառողական վարկերի և վարկային գծերի տրամադրում, ինչը բանկի քարտապան հաճախորդների համար ամբողջությամբ օնլայն է՝ առանց բանկ այցելելու անհրաժեշտության: Մնացած բոլոր, այդ թվում բանկի հաճախորդ չհանդիսացող հաճախորդների համար վարկը հաստատվում է օնլայն:

Կարևոր է նշել, որ բանկը սահմանել է տնտեսության մի շարք առանցքային ոլորտների համար հատուկ վարկավորման արտոնյալ պայմաններ, որոնք կիրառելի են նաև առցանց վարկի համար դիմելիս: 2018թ. այլ ռազմավարական ուղղություններից է ՓԲԶ վարկավորումը, հիփոթեքային վարկավորումը և ավտովարկավորումը: Այդ ուղղությունների կարգացման նպատակով բանկը մի շարք արշավներ է իրականացրել, ընդլայնել է իր համագործակցությունը ավտոսրահների հետ:

Հաճախորդների սպասարկում

Ամերիաբանկի նպատակն է հաճախորդների համար ապահովել ամենաբարձր որակի սպասարկումը՝ օգնելով նրանց ստեղծել, բավմապատկել և պահպանել իրենց ֆինանսական կարողությունը:

Մենք առաջարկում ենք պարզ ու թափանցիկ բանկային պրոդուկտներ՝ կանխատեսելով և բավարարելով հաճախորդների բոլոր կարիքները:

Ռազմավարության և սպասարկման բարելավման շնորհիվ 2018 թվականի առաջին կիսամյակում 21%-ով ավելացել է Ամերիաբանկի մանրածախ պորտֆելը, ընդ որում՝ ֆիզիկական անձ հաճախորդների թիվն ավելացել է 46%-ով:

Չնայած ավանդային տոկոսադրույքների անկմանը՝ Ամերիաբանկի ավանդային պորտֆելի ցուցանիշները բարելավվել են, մասնավորապես՝ մանրածախ ցպահանջ ավանդներն ավելացել են 18%-ով՝ կազմելով 69,231 մլն ՀՀ դրամ, ժամկետային ավանդները նվազել են 2%-ով՝ կազմելով 131,814 մլն ՀՀ դրամ:

Ցպահանջ ավանդների աճը կարևոր ցուցանիշ է, որը վկայում է հաճախորդների վստահության և հավատարմության մասին: Այս մասով Ամերիաբանկը ցուցաբերում է աճի կայուն տեմպեր:

Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսերի ծավալը 2018 թ. կազմել է 7.230 մլն ՀՀ դրամ, որից 6.844 մլն ՀՀ դրամի պարտատոմսերը տեղաբաշխվել են ֆիզիկական անձանց շրջանում, ինչը վկայում է հաճախորդների բարձր վստահության և արդյունավետ համագործակցության մասին:

Վճարային քարտեր

Իր ռազմավարության շրջանակներում բանկը մշտապես կարևորում է քարտային պրոդուկտների շարունակական կարգացումը՝ թե՛որակապես, թե՛ քանակապես:

Մեր քարտային պրոդուկտների հիմքում են սպասարկման բարձր որակն ու ծառայությունների հասանելիությունը: Մասնավորապես, քարտային գործարքների շուրջօրյա մոնիթորինգն ու տեխնիկական օժանդակումը թույլ են տալիս բարձրակարգ աջակցություն ցուցաբերել հաճախորդներին: Այս բոլոր ջանքերի շնորհիվ մեզ հաջողվեց զգալի արդյունք գրանցել քարտային ոլորտում՝ ապահովելով քարտային ընդհանուր քանակի 14% աճ:

Բանկը շարունակաբար ընդլայնում է իր համագործակցությունը վճարային համակարգերի հետ:

Վարկային գծերը բանկը համարում է քարտային բիզնեսի կարևոր տարր, որը խթանելու ուղղությամբ գործադրված ջանքերի շնորհիվ վարկային գծերի պորտֆելն աճել է 10%-ով:

Ամերիաբանկը շուկայի առաջատարն է էլեկտրոնային առևտրի և վճարային տերմինալների ցուցանիշներով: Մեզ համար կարևոր է, որ հաճախորդների համար գնումներ կատարելու գործընթացը լինի հնարավորապես հեշտ ու հաճելի, ուստի մենք շարունակաբար ընդլայնում ենք POS տերմինալների և վիրտուալ POS տերմինալների ցանցը: 2018թ. վիրտուալ POS տերմինալների քանակն ավելացավ 14%-ով՝ հասնելով 291-ի, իսկ դրանցով իրականացված գործարքների ծավալը՝ 165%-ով՝ 2017 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ: POS տերմինալների քանակն ավելացել է 7%-ով՝ հասնելով 1,725-ի, իսկ դրանցով իրականացված գործարքների ծավալը՝ 22%-ով:

Մանրածախ վարկավորում

2018թ. իրականացվեցին վարկավորման գործընթացը բարելավելուն ուղղված մի շարք ջանքեր: Բանկն ամբողջությամբ վերանայեց և բարելավեց վարկավորման իր պայմանները, մասնավորապես՝

- Տոկոսադրույք (իջեցված տոկոսադրույքներ բոլոր արժույթների համար, լողացող տոկոսադրույք բոլոր տեսակ կարճաժամկետ վարկերի համար)
- Ոչ տոկոսային պայմանների վերանայում, ռիսկի վրա հիմնված գնագոյացման մեխանիզմի ներդրում, որի միջոցով ցածր ռիսկային հաճախորդներին կարող են առաջարկվել ավելի ցածր տոկոսադրույքներ:

2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում շարունակել է գործել նախորդ տարի մեկնարկած հիփոթեքային արշավը: Սեպտեմբերին մեկնարկեցին փոքր և միջին ձեռնարկությունների վարկերի և հիփոթեքային վարկերի լայնածավալ արշավեր, որոնց հիմնական բաղադրիչը ռիսկերի վրա հիմնված տոկոսադրույքներն են: Արշավների շրջանակներում տրամադրվել է ավելի քան 400 ՓՄՁ և հիփոթեքային վրակ 12 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով: 2018թ. առաջին կիսամյակի ընթացքում Բանկի մանրածախ վարկային պորտֆելն ավելացել է 21%-ով, մասնավորապես՝ կիսամյակի վերջի դրությամբ այն կազմում էր 90,136 մլն ՀՀ դրամ: Հիփոթեքային վարկերի պորտֆելը կազմել է 31,320 մլն ՀՀ դրամ, ավտովարկերի պորտֆելը՝ 1,902 մլն ՀՀ դրամ, վարկային քարտերի պորտֆելը՝ 8,857 մլն ՀՀ դրամ:

Ամերիաբանկի բոլոր որոշումներն ուղղված են հաճախորդների կարիքները առավելագույնս բավարարելուն և սպասարկման բարձր որակ ապահովելուն:

ԱԿՆԱՐԿ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կորպորատիվ բանկային ծառայությունների շուկայում Ամերիաբանկը ճանաչված է որպես վստահելի ռազմավարական գործընկեր: Ամերիաբանկը ցուցաբերում է անհատական մոտեցում և օգնում յուրաքանչյուր հաճախորդին գտնել տարբեր ֆինանսական գործիքներից բաղկացած իր համար լավագույն լուծումը:

2018թ. 1-ին կիսամյակի ընթացքում Բանկը պահպանեց կորպորատիվ վարկավորման առաջատարի իր դիրքը: Կորպորատիվ վարկերի պորտֆելը նշված ժամանակահատվածի վերջում կազմեց 413 մլրդ ՀՀ դրամ, աճելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 13.5%-ով:

Կորպորատիվ պորտֆելում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճ է գրանցվել բոլոր ուղղություններով:

Խոշոր վարկերի պորտֆելը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 13%-ով և դիտարկվող ժամանակահատվածի ավարտին կազմել է 330 մլրդ ՀՀ դրամ:

Իր ռազմավարությանը համահունչ՝ բանկը շարունակել է ուշադրության կիսակետում պահել հատկապես ՓՄՁ վարկավորումը՝ այս սեգմենտին առաջարկելով նոր, մրցակցային պրոդուկտներ: ՓՄՁ վարկավորմանն ուղղված նպատակային քաղաքականության արդյունքում ՓՄՁ վարկերի պորտֆելը 2018թ. առաջին կիսամյակում շարունակեց աճել ժամանակահատվածի վերջում կազմելով 68.5 մլրդ ՀՀ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը կազմել է շուրջ 15%: Աձին նպաստեց նորարարական և «կանաչ» ծրագրերի վարկավորումը մրցակցային պայմաններով, որակյալ

սպասարկումը: Ինչպես միշտ, ֆինանսավորման մեջ մեր որդեգրած հիմնական սկզբունքներից մեկն է անհատական մոտեցումը յուրաքանչյուր հաճախորդին: ՓՄՁ ֆինանսավորումն ընդգրկում է տնտեսության հիմնական զարգացող ճյուղերը, այդ թվում՝ էներգետիկան, գյուղատնտեսությունը, շինարարությունը, զբոսաշրջությունը և այլ ոլորտներ: Բանկի առանձնակի ուշադրությանն են արժանանում հատկապես էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի նախագծերը, որոնց ֆինանսավորման համար բանկն առաջարկում է առավել բարենպաստ պայմաններ:

Լիպինգ և ֆակտորինգ

Ֆինանսական վարձակալությունը՝ լիպինգը Ամերիաբանկի 2018թ. -ի ռազմավարական և բիզնես պլանով առավել ընդգծեց իր կարևորությունն ու առավելությունները: 2018թ. առաջին կիսամյակի տվյալներով գրանցվել է ծավալային և քանակային զգալի աճ նույն ժամանակահատվածի 2017թ. համեմատ: Ամերիաբանկը ընդլայնել է համագործակցության շրջանակը տարբեր ոլորտի կազմակերպությունների հետ՝ կնքելով համագործակցության տասնյակից ավել պայմանագրեր բժշկական, շինարարական, ավտոդիլեր հանդիսացող մատակարար կազմակերպությունների հետ:

Առանձակի շեշտադրելով արևային էլեկտրակայանների պահանջը և վերաֆինանսավորման հատուկ պայմանները կնքված Գերմանահայկական ֆոնդի հետ՝ հաստատվել են գործընկերական հարաբերություններ վերականգնող էներգիայի ոլորտում աչքի

ընկնող վաճառող/արտադրող կապմակերպությունների հետ՝ առաջարկելով շահավետ ֆինանսավորման պայմաններ լիպինգառուներին: Նշված կապմակերպությունների ցանկում են էկոլիլ ՍՊԸ-ն, ՋԻԷՍԷՍ ՍՊԸ-ն, ՊՐՈՖՊԱՆԵԼ ՍՊԸ-ն:

Ֆակտորինգը ևս Բանկի գործունեության կարևոր ուղղություն է որպես կարճաժամկետ ֆինանսավորման լավագույն լուծում: 2018թ. առաջին կիսամյակի տվյալների համաձայն Ամերիաբանկի ֆակտորինգի պորտֆելը կազմել է 6.5 մլրդ ՀՀ դրամ: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ՝ ֆակտորինգային գործառնությունների ընդհանուր ծավալն աճել է 15%-ով՝ կազմելով 10.4 մլրդ ՀՀ դրամ, ընդ որում գործարքների զգալի մասը բաժին է ընկել արտահանման ֆակտորինգին, ինչպես և նախորդ տարիներին: Բանկի ֆակտորինգային ծառայություններից օգտվում են տնտեսության ամենատարբեր ոլորտներ ներկայացնող հաճախորդներ, ամենատարբեր չափի ընկերություններ, որոնց անհրաժեշտ է համարել շրջանառու միջոցները կամ կանխիկը: Բավարարույթ հաճախորդների հետ աշխատանքն Ամերիաբանկին թույլ է տալիս նրանցից յուրաքանչյուրի համար ոչ ստանդարտ ու առանձնահատուկ մոտեցումներ մշակել և հետաձգված վճարման նոր լուծումներ առաջարկել:

Առևտրի ֆինանսավորում

Ամերիաբանկը Հայաստանում առևտրի ֆինանսավորման ծառայություններ մատուցող հիմնական կառույցներից է: Մեր կողմից առաջարկված գործիքները նախատեսված են մեղմացնելու ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական շուկաներում առկա ռիսկերը: Շնորհիվ սպասարկման բարձր մակարդակի, նոր ու հետաքրքիր նախագծերի, ինչպես նաև թողարկված ակրեդիտիվների ու երաշխիքների ծավալի՝ Բանկն արժանացել է հեղինակավոր միջապգային կապմակերպությունների բավարարիչ մրցանակների տարիներ շարունակ, այդ թվում ՄՖԿ-ի՝ «Կովկասում և Կենտրոնական Ասիայում լավագույն թողարկող գործընկեր-բանկ» և ՎՋԵԲ-ի՝ «Հայաստանում ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակներին, ՄՖԿ-ի՝ «Կովկասյան տարածաշրջանում Առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակին, ՎՋԵԲ-ի՝ «Տարվա լավագույն գործարք» և «Տարվա լավագույն գործարք՝ էներգարդյունավետության համար» մրցանակներին:

Հայաստանում նոր սերնդի օպտիկամանրաթելային ցանցի և էներգաարդյունավետ ջերմոցների կառուցման նախագծերը ֆինանսավորելու համար, ՄՖԿ-ի՝ «Լավագույն թողարկող բանկ Առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում էներգիայի արդյունավետ օգտագործման նախագծերում» մրցանակին, Կոմերցբանկի՝ «Առևտրի ֆինանսավորման ոլորտում անթերի համագործակցության» մրցանակին: Ուշագրավ է, որ 2013թ. Ամերիաբանկն առաջինն էր հայկական բանկերից, որը ՎՋԵԲ-ի կողմից ստացավ «հաստատող բանկի» կարգավիճակ Առևտրի աջակցման միջապգային ծրագրի շրջանակներում:

Առևտրի ֆինանսավորման ոլորտում Ամերիաբանկի գործընկերներն են մի շարք միջապգային բանկեր: Մասնավորապես, մենք ունենք համագործակցության հարուստ պատմություն Կոմերցբանկի հետ, ընդ որում Կոմերցբանկի մասնակցությամբ մի քանի գործարքներ արժանացել են մրցանակների: Դեռևս 2010թ-ից գործում է առևտրի ֆինանսավորման երկկողմանի պայմանագիրն

Ամերիաբանկի ու Կոմերցբանկի միջև: Յունիկրեդիտ բանկ՝ Ամերիաբանկը և Յունիկրեդիտը համագործակցում են տարիներ շարունակ, և այս ընթացքում Յունիկրեդիտը դարձել է Ամերիաբանկի վստահելի գործընկերը՝ տրամադրելով առևտրի ֆինանսավորման ծառայություններ գործող սահմանաչափերի ներքո: Երկու բանկերի համագործակցության շրջանակը գնալով ընդլայնվում է՝ ստեղծելով նորանոր հնարավորություններ արտաքին առևտրով զբաղվող տնտեսվարողների համար: Այդ ուղղությամբ հերթական քայլը կատարվեց 2017թ., երբ բանկերն ստորագրեցին Առևտրային վարկավորման հիմնական պայմանագիր՝ Հայաստանում առևտրի ֆինանսավորման նոր հնարավորություններ ստեղծելու համար:

Ամերիաբանկը տարիներ շարունակ համագործակցում է Սիթիբանկի հետ՝ աստիճանաբար ավելացնելով գործարքների թիվը և ծավալն ու հայկական ընկերությունների համար ապահովելով էժան ֆինանսավորման հնարավորություն: 2011թ. Ամերիաբանկը Սիթիբանկի հետ կնքեց Առևտրի վարկավորման փոխհատուցման շարունակական համաձայնագիրը: Այս և այլ պայմանագրերի ներքո արդյունավետ համագործակցության շնորհիվ Սիթիբանկն ավելացրել է Ամերիաբանկի ֆինանսավորման սահմանաչափերը:

Ամերիաբանկն ակտիվորեն համագործակցում է նաև բելգիական ԲԵՅԲՍԻ բանկի հետ: Վերջինիս միջոցով Բանկն իրականացրեց երկրի համար կարևոր նշանակության գործարքների ֆինանսավորում առևտրային և ջերմոցային տնտեսության ոլորտներում:

Հաճախորդների հետ սերտ համագործակցություն ծավալելով Բանկը կարողանում է հիմնավորված խորհրդատվություն ու հաճախորդի կարիքներից բխող նորարար ֆինանսական լուծումներ առաջարկել: 2018թ. առաջին կիսամյակում Ամերիաբանկը նորից ապացուցեց, որ վստահելի, կայուն ու դինամիկ գործընկեր է առևտրի ֆինանսավորման ոլորտում: Մասնավորապես, Բանկի թողարկած ակրեդիտիվների ու երաշխիքների գործող ծավալը 31.06.2018թ. դրությամբ գերազանցեց 17.6 մլրդ ՀՀ դրամը գրանցելով մոտ 43 % աճ 31.12.2017թ. համեմատ:

ԱԿՆԱՐԿ

ՆԵՐԴՐՈՒՄԱԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես նորարարական ունիվերսալ բանկ՝ Ամերիաբանկը հիմք է ստեղծել Հայաստանում ներդրումաբանկային և առևտրային գործառնությունների ոլորտի ծառայությունների պարզացման համար: Բարեհաջող իրականացնելով բազմաթիվ աննախադեպ, ոլորտի համար էական գործարքներ և պարբերաբար ստեղծելով նոր հնարավորություններ ներդրողների համար՝ Ամերիաբանկը վաստակել է նորարար ներդրումային բանկի համբավ: Ամերիաբանկը տրամադրում է ներդրումաբանկային և առևտրային ծառայությունների ամենալայն տեսականին Հայաստանում: Այն ընդգրկում է կորպորատիվ ֆինանսները, կապիտալի շուկաները, միաձուլումներն ու ձեռքբերումները, արտարժույթային և բրոքերային գործառնությունները, միջնորդություն Դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի ռեեստրավարման և պահառության ծառայությունների ժամանակ:

Կորպորատիվ ֆինանսների խորհրդատվություն

Ամերիաբանկի Կորպորատիվ ֆինանսների բաժինն առաջարկում է ընթացիկ օժանդակություն կորպորատիվ ֆինանսների ոլորտում և լուծումների մշակում Ամերիաբանկի հաճախորդների համար: Թիմը համախմբել է փորձառու բազմակողմանի մասնագետների, ովքեր կարող են խորհրդատվություն տրամադրել ամենատարբեր բնագավառներում՝ պարտքային և փայտտիրական ֆինանսավորում կապիտալի փակ շուկաներից, վարկանիշի ստացում և ֆինանսավորման ռազմավարության մշակում:

2016թ. Կորպորատիվ ֆինանսների բաժինը էական ներդրում ունեցավ Բանկի հետագա աճն ապահովելու գործում՝ ներգրավելով 100 մլն ԱՄՆ դոլար միջոցներ 5 տարբեր միջազգային/վարձացման ֆինանսական հաստատությունների միջոցով: Ամերիաբանկը ոչ միայն ապահովում է գործող միջազգային կառույցների և վարձացման հիմնադրամների հետ հարաբերությունները, այլև մշտապես աշխատում է նոր միջազգային գործընկերների բացահայտման ուղղությամբ, որոնք հետաքրքրված են Հայաստանի գործարար ոլորտների պարզացմամբ: Նախորդ 8 տարիների ընթացքում Ամերիաբանկն ընդհանուր առմամբ ներգրավել է ավելի քան 600 մլն ԱՄՆ դոլար տարբեր միջազգային ֆինանսական հաստատություններից և վարձացման կառույցներից, որոնց թվում են Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ), Հոլանդիայի վարձացման բանկը (FMO), Գերմանական ներդրումների և վարձացման ընկերությունը (DEG), Վերակառուցման և վարձացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ), Եվրասիական վարձացման բանկը



(ԵԶԲ), Ասիական վարձացման բանկը (ԱԶԲ), Ավստրիական վարձացման բանկը (OeEB), Պրոպարկո ֆրանսիական գործակալությունը, Առևտրի և վարձացման սնծովյան բանկը (BSTDB), ՕՊԵԿ-ը և Սիմբիոտիքսը:

2018-ի առաջին կեսը նշանակալից է Առևտրի և վարձացման սնծովյան բանկի (BSTDB), Ասիական վարձացման բանկի (ԱԶԲ), Հոլանդիայի վարձացման բանկի (FMO) և Սիմբիոտիքսի հետ կնքված գործարքներով: 2018 թվականը նշանակալից է նաև ակտիվ բանակցային գործընթացներով մի շարք գործընկերների հետ, որոնց արդյունքը հրապարակայնություն կստանա տարվա երկրորդ կիսամյակում: Միջազգային կառույցներից և վարձացման գործակալություններից ներգրավված միջոցներն ուղղվել են փոքր և միջին ձեռնարկությունների, էներգաարդյունավետ- տուրյան/վերականգնվող էներգետիկայի և գյուղատնտեսական նախագծերի ֆինանսավորմանը՝ հստակ ընդգծելով Ամերիաբանկի դիրքորոշումը վերոնշյալ ոլորտների նկատմամբ: Մենք վստահ ենք, որ միջազգային ֆինանսական միջոցներն ուղղվելով դեպի այդ ոլորտներ, էապես նպաստում ենք երկրի կայուն տնտեսական աճին: Մեր թիմի կողմից ներգրավված ներդրողների ցանկը չի սահմանափակվում միայն միջազգային ֆինանսական կառույցներով և վարձացման գործակալություններով, այլ ներառում է միջազգային ներկայություն ունեցող խոշոր բանկեր, որոնք համագործակցում են Ամերիաբանկի հետ նաև գործառնական ոլորտում:

Կապիտալի շուկաներ

Ամերիաբանկի պրոֆեսիոնալ թիմը շարունակում է աջակցել իր հաճախորդներին՝ պարտքային և փայատիրական կապիտալի շուկաներում գործունեություն ծավալող անձանց՝ նրանց առաջարկելով ծառայությունների ամբողջական փաթեթ, որը ներառում է կորպորատիվ պարտատոմսերի թողարկումը, արժեթղթերի առաջնային և երկրորդային տեղաբաշխումը, շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքերի) ծառայություններ և խորհրդատվություն: 2018թ.-ի առաջին կիսամյակի դրությամբ Ամերիաբանկը պահպանել է տեղական կապիտալի շուկաներում առաջատարի իր դիրքերը: Շարունակելով 2016թ.-ին սկիզբ դրած պարտատոմսերի թողարկման գործընթացը 2018թ.-ին Ամերիաբանկը տեղաբաշխեց թվով 2 տրանշ՝ 10 և 5 մլն ԱՄՆ դոլար ծավալներով: Արդյունքում Ամերիաբանկի դոլարային պարտատոմսերի ծավալը կազմում է ՆԱՄԴԱԲ ՕԷՄԷԲՍ Արմենիա արժեթղթերի շուկայի դոլարային պարտատոմսերի 30%-ը: Առաջին կիսամյակի տվյալներով Ամերիաբանկի թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր ծավալը դոլարային արտահայտությամբ կազմել է ավելի քան 79 մլն դոլար:

Միաձուլումներ և ձեռքբերումներ

Ամերիաբանկի Միաձուլումների և ձեռքբերումների բաժինը տրամադրում է ընկերությունների վաճառքի, ձեռքբերման և միաձուլման ծառայությունների համալիր փաթեթ: Թիմը մասնագիտացված է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բիզնեսի գնահատումը, ֆինանսական և կոմերցիոն ստուգումները (due diligence), խորհրդատվությունը և վաճառքի/ ձեռքբերման նախագծերի կառավարումը: 2018թ. առաջին կիսամյակում Միաձուլումների և ձեռքբերումների թիմի հիմնական շեշտը հյուրանոցային և ռեստորանային բիզնեսի (HoReCa), ֆինանսական ծառայությունների, հանքարդյունաբերության, մասնագիտացված մանրածախ առևտրի, հեռահաղորդակցությունների, առողջապահության և մեդիա արդյունաբերության ոլորտներն էին: Ամերիաբանկը մատուցել է խորհրդատվություն տարատեսակ ոլորտներում, ինչպիսիք են՝ անշարժ գույքի, տրանսպորտի և կապի, գյուղատնտեսության և հանքարդյունաբերության ոլորտները: ՀՀ ԿԲ կողմից ընդունված և 2017թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող կապիտալի նվազագույն սահմանաչափը լրացուցիչ խթան էր բանկային ոլորտում վերջին երկու տարիների ընթացքում միաձուլումների և ձեռքբերումների գործընթացների ակտիվացման համար: Չնայած, որ միաձուլումների և ձեռքբերումների հետ կապված սպասումներից հետո մի քանի փոքր գործարքներ տեղի ունեցան, միևնույն է ընդհանուր իրավիճակը մնում է կայուն՝ առաջիկա խոշոր ձեռքբերումների ակնկալիքով, որոնք անխուսափելիորեն կհանգեցնեն բանկային ոլորտի կոնսոլիդացմանը:

Առևտրային գործառնություններ

2018թ. 1-ին կիսամյակում բանկը պահպանել է 2-րդ տեղը ՀՀ շուկայում առևտրային գործառնություններից ստացված վուտ եկամտով: Նշված ժամանակահատվածում առևտրային գործառնություններից (արժույթային գործառնություններից, ոսկով և արժեթղթերով գործառնություններից) և վերագնահատումից ստացված վուտ եկամտուն աճել է շուրջ 12%-ով:

2018թ. 1-ին կիսամյակում ՀՀ արժույթային շուկան շարունակում էր դրսևորել համեմատաբար կայուն վարքագիծ, փոխարժեքների կտրուկ տատանումներ չեն արձանագրվել: Արտարժույթային շուկայում բանկը պահպանեց առաջատար դիրքը՝ արձանագրելով հաճախորդների արտարժույթային գործարքների 43% աճ և արժույթային գործառնություններից ստացվող եկամտի ավելի քան 45% աճ:

Ամերիաբանկը շարունակում էր ակտիվորեն մասնակցել ՀՀ և այլ երկրների եվրապարտատոմսերի շուկայի գործունեությանը և խոշորագույն մասնակիցներից էր նաև ոչ պետական պարտատոմսերում իրականացված ներդրումների ծավալով: Բանկն

առաջատար դիրքերում է եղել նաև պետական պարտատոմսերում ներդրումներով և դրանցից ստացվող տոկոսային եկամտով:

2018թ. 1-ին կիսամյակում Ամերիաբանկի բրոքերային ծառայություններից օգտվող հաճախորդների քանակն աճել է ավելի քան 12%-ով: Շնորհիվ «Ասա ընկերոջ» ծրագրի, ինչպես նաև բրոքերային ծառայությունների տրամադրման գործընթացի պարզեցման արդյունքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամուտները աճել են սրընթաց` ավելի քան 83%-ով: Այդ ամենը նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ Ամերիաբանկի բրոքերային ծառայությունները հասանելի են 23 երկրի 100-ից ավել մասնագիտացված առևտրային հարթակներում, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել տարատեսակ արժեթղթերի առքուվաճառք ֆոնդային բորսաներում և մշտապես տեղեկացված լինել միջազգային ֆինանսական շուկայի վարգացումներին: Բացելով բրոքերային հաշիվ Ամերիաբանկում` հաճախորդը ստանում է հասանելիություն աշխարհի ամենամեծ ֆոնդային բորսաներին, ինչպիսիք են` NYSE-ն, NASDAQ-ը, AMEX-ն, ARCA-ն, CBOT-ը և այլն (ԱՄՆ), Տորոնտոյի և Մոնրեալի ֆոնդային բորսաները (Կանադա), LSE-ն, LSE International Order Book-ը (Միացյալ Թագավորություն), Ֆրանկֆուրտի բորսան (Գերմանիա), Վիեննայի բորսան (Ավստրիա), Բրյուսելի Euronext բորսան, Nasdaq OMX Europe-ը (NUROEN) (Բելգիա), Euronext France-ը (Ֆրանսիա), Շվեյցարիայի ֆոնդային բորսան (Շվեյցարիա), Borsa Italiana-ն (Իտալիա), Մադրիդի բորսան (Իսպանիա), Տոկիոյի բորսան (Ճապոնիա), Հոնկոնգի բորսան (Չինաստան), Ավստրալիայի բորսան և այլն: Օգտվելով Ameria Global Trading ծրագրից` հաճախորդը հնարավորություն է ստանում 24 ժամ անընդմեջ իրականացնել տարբեր արժույթներով գնանշվող արժեթղթերի առքուվաճառք` ստանալով միջազգային շուկաների արժեթղթերի գնանշումներն իրական ժամանակում:

ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼ

ՏԵՍԼԱԿԱՆԻ ԿՐԱ՝ ՄԵԾ ՀԵՌԱԿՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ
ԴԻՏԱՐԿԵԼՈՎ ՄԻՋԱԿԱՅՐԸ ԵՎ ՄՈՏԻԿԻՑ՝
ԱՐԺԵՔՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Մակրոտնտեսական նախադրյալներ

2018թ. I կիսամյակում ընդհանուր առմամբ շարունակվում էին նախորդ տարի գրանցված ՀՀ մակրոտնտեսական միջավայրի բարելավման միտումները, նույնիսկ հաշվի առնելով ներքին քաղաքական պարզացումները 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին: 2018թ. առաջին կիսամյակում գրանցվեց 8.2% տնտեսական աճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ինչը ավելի բարձր էր, քան 2017թ. I կիսամյակի համապատասխան ցուցանիշը (7.0%): Միջավայրի բարելավումը հատկապես պայմանավորված էր 2015-2016թթ. լճացման շրջանի նկատմամբ, ինչը հիմնականում պայմանավորված էր Ռուսաստանի տնտեսության խնդիրներով և դրա ազդեցությամբ: 2009թ. կտրուկ անկումից հետո տնտեսությունն ունեցավ չափավոր վերականգնում՝ 2010-2015թթ. 4.0% միջին տարեկան աճով, այն դեպքում, որ իսկ 2016թ. տնտեսական աճը կազմեց միայն 0.2%: 2017թ. ՀՆԱ աճը կազմեց 7.5%, որը ոչ միայն ամենաբարձր ցուցանիշն էր վերջին 10 տարվա ընթացքում Հայաստանում, այլև ամենաբարձրն էր տարածաշրջանի և Եվրասիական տնտեսական միության այլ երկրների համեմատ:

2015-2016թթ. համաշխարհային տնտեսության դանդաղ աճը (պարզացող երկրներում և հատկապես Ռուսաստանում), ապրանքների ցածր գները, տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը բացասական ազդեցություն ունեցան ՀՀ տնտեսության վրա: Այս միտումները փոխվեցին 2017թ. վերջին կեսից: Նավթի գների դանդաղ աճի պայմաններում Ռուսաստանի տնտեսությունը սկսեց վերականգնվել: Կրկին ավելացան նաև դեպի Հայաստան դրամական փոխանցումների ներհոսքը, ակտիվացավ արտաքին առևտուրը: Միաժամանակ օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը դեռևս ցածր է մնում:

2017-2018թթ. Ռուսաստանի տնտեսության աստիճանաբար վերականգնման հետ մեկտեղ, հատկապես նկատելի է դեպի Հայաստան դրամական փոխանցումների և արտաքին առևտրի ծավալների վերականգնումը: Ռուսաստանի տնտեսությունից կախվածությունն ավելի խորացավ Հայաստանի ԵՏՄ-ին անդամակցելուց հետո (2015թ. հունվարին): Որպես ԵՏՄ անդամ Հայաստանն օգտվում է մաքսային և այլ արտոնություններից: 2015-2016թթ. անկումից հետո ԵՏՄ անդամ երկրների արտահանման և ներկրման ծավալն սկսեց աճել: 2014-2016թթ. Ռուսաստանից Հայաստան մասնավոր դրամական փոխանցումների ծավալի ներհոսքը 2013թ. համեմատ կրճատվել էր 33.4%-ով (2014թ.՝ 7.8%-ով, 2015թ.՝ 23.2%-ով, 2016թ.՝ 6.1%-ով): 2017թ., սակայն, միտումը փոխվեց, և արձանագրվեց 18.7% աճ: 2018թ. առաջին կիսամյակում դրամական փոխանցումների ներհոսքը շարունակեց աճել մի փոքր ավելի դանդաղ՝ 8.7%: 2017-2018թթ. աճի շնորհիվ հաջողվեց վերականգնել նախորդող 3 տարվա ընթացքում գրանցված ծավալի կրճատման ավելի քան կեսը:

Ակնկալվում է, որ մոտակա 2-3 տարիներին երկրում կգրանցվի չափավոր տնտեսական աճ: Ըստ միջազգային կազմակերպությունների **կանխատեսումների**՝ 2018թ. տնտեսական աճը կկազմի 3-4% (3.1%՝ ըստ Համաշխարհային բանկի, 3.4%՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի, 3.6%՝ ըստ Fitch-ի):

Ի տարբերություն Նախորդ մի քանի տարիների, երբ նույնիսկ գնանկում էր նկատվում, 2018թ. առաջին եռամսյակում զգալի էին գնաճի որոշակի ճնշումներ: Որոշ թանկացումներ պարենային ապրանքների, վառելիքի և ավիափոխադրումների մասով արձանագրվել էին դեռևս 2017թ. երկրորդ կիսամյակում: Մասնավորապես, մարտին սպառողական գների ինդեքսը կապմեց 102.5% (2017թ. դեկտեմբերի համեմատությամբ) և 103.3 (I եռամսյակը Նախորդ տարվա I եռամսյակի նկատմամբ), ինչը որոշակի սպասումներ կարող էր ձևավորել, որ 2018թ. գնաճը հնարավոր է գերապանցի ՀՀ կենտրոնական բանկի կողմից թիրախավորված 4.0% (1.5%) շեմը: Այնուամենայնիվ, 2018թ. երկրորդ եռամսյակում բավականին զգալի գնանկում տեղի ունեցավ: Այսպիսով, 2018թ. I կիսամյակի արդյունքներով **սպառողական գների ինդեքսը** կապմեց 99.4% (հունիսը դեկտեմբերի նկատմամբ) և 102.4% (I կիսամյակի միջինը Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ): Այս միտումները թույլ են տալիս ենթադրել, որ 2018թ. արդյունքներով սպառողական գների ինդեքսի կտրուկ տատանումներ չեն նախանշվում, այն կլինի գնաճի թիրախավորված սահմաններում: Դրամ/դոլար փոխարժեքը ևս շարունակում է կայունություն ցուցաբերել:

2017թ. **անվանական ՀՆԱ-ն** կապմեց 5.58 տրիլիոն ՀՀ դրամ, որը պատմության մեջ ամենաբարձր ցուցանիշն էր: 2017թ. իրական ՀՆԱ-ն 17.2%-ով գերապանցում է նախաձգնաժամային (2008թ.) մակարդակը, սակայն դոլարային արտահայտմամբ անվանական ՀՆԱ-ն դեռևս պիչում էր նույն տարվա ցուցանիշին, ինչը պայմանավորված է 2014թ. դեկտեմբերին փոխարժեքի տատանումների արդյունքում դրամի դոլարի նկատմամբ 15% արժեզրկմամբ: Սպասվում է, որ ներկայիս միտումների պահպանության պարագայում 2018թ. արդյունքներով անվանական ՀՆԱ-ն դոլարային արտահայտությամբ կարող է վերջապես գերապանցել Նախորդոր բոլոր տարիների ցուցանիշը:

2018-ի առաջին կիսամյակում, ինչպես ամբողջ 2017թ-ին, տնտեսական աճի արագացումը հիմնականում պայմանավորված էր **ՀՆԱ-ի աճին նպաստող տնտեսության հիմնական ճյուղերի** ակտիվացմամբ, որոնցից յուրաքանչյուրի նպաստումը աճին 1.1 տոկոսային կետ է՝ առևտուր (աճ՝ 10.7%), մշակող արդյունաբերություն (9.2% աճ) և մշակույթ, վվարձություններ և հանգիստ (18.9% աճ): Հիշատակենք ևս երեք ճյուղ, որոնք ևս զգալի նպաստում են ունեցել 2018թ. կիսամյակային ՀՆԱ-ի աճին (0.9 տոկոսային կետի նպաստմամբ)՝ ապրանքների զուտ հարկեր (8.6% աճ), ֆինանսներ և ապահովագրություն (14.0% աճ) և առողջապահություն (19.2% աճ): Հատկանշական է, որ 2018թ. առաջին կիսամյակում աճ է արձանագրվել նաև գյուղատնտեսության (5.6%) և շինարարության (8.8%) ճյուղերում, որտեղ վերջին տարիներին անկում էր արձանագրվում:

Գյուղատնտեսությունը, որը մինչև 2015թ. առաջատարն էր, 2016թ. 5.8% անկումից հետո շարունակեց կրճատվել նաև 2017թ.՝ գրանցելով 4.0% անկում: Կրճատումը պայմանավորված էր եղանակային անբարենպաստ պայմանների արդյունքում մշակաբույսերի ենթաճյուղի անկմամբ և 2014թ. գյուղատնտեսական հաշվառման արդյունքներով ճշգրտումներով: Մինևնույն ժամանակ անասնաբուծությունը և ձկնաբուծությունը շարունակել են աճել: Այդուհանդերձ, գյուղատնտեսությունն առաջատարն է ըստ ՀՆԱ-ում տեսակարար կշռի (14.7%): 2017թ. իրականացվեցին ոլորտի աճին նպաստող մի շարք ծրագրեր. Վերանայվեց գյուղատնտեսության սուբսիդավորման պետական քաղաքականությունը, գործարկվեց պետական աջակցման մի քանի նոր ծրագիր, միջոցներ են ձեռնարկվում խթանելու համար գյուղմթերքի արտահանումը, ներդրվել են լիպիկով ձեռք բերվող գյուղտեխնիկայի տոկոսադրույքների

մասնակի սուբսիդավորման պիլոտային ծրագրեր, և այլն: Ակնկալում ենք, որ մոտակա մի քանի տարվա ընթացքում գյուղատնտեսության ոլորտի աճը կվերականգնվի. 2018թ. ծրագրերն արդեն մշակվել են: Կառավարության 2018թ. ծրագրերն ուղղված են անասնաբուծության և կերերի արտադրության ենթաճյուղերի վարգացմանը: ԵՏՄ անդամակցությունը, ինչպես նաև արևմտյան երկրներից Ռուսաստան գյուղմթերքի ներկրման էմբարգոն, նպաստում են հայկական ապրանքների արտահանմանը դեպի Ռուսաստան և խթանում Հայաստանում գյուղմթերքի արտադրությունը:

Շինարարության ճյուղում, որն առաջատարն էր մինչև 2008թ., տարեցտարի անկում էր գրանցում վերջին 4-5 տարիներին՝ մինչև 2017թ. կեսը: Սկսած 2017-ի 3-րդ եռամսյակից պատկերը սկսեց փոխվել, և տարվա արդյունքներով ոլորտն արձանագրեց 3.1% աճ 4 տարվա անընդմեջ անկումից հետո: 2018-ի առաջին կիսամյակում աճը զգալիորեն արագացել է՝ հասնելով 8.8%-ի: Աճին նպաստում էին միջազգային վարկային ծրագրերի հաշվին ֆինանսավորվող նախագծերը, ինչպես նաև մասնավոր ներդրումները:

ՀՆԱ աճում ամենամեծ ներդրումն ունեցող ոլորտներից մեկը՝ **ֆինանսական և ապահովագրական** ծառայությունների ոլորտը 2011-2014թթ. ընթացքում ամենաարագ աճող ոլորտներից էր: Այդուհանդերձ, մի քանի տարվա երկնիշ աճից հետո 2015թ-ին ոլորտը 7.2%-նոց անկում ապրեց, ինչը հիմնականում պայմանավորված էր տարածաշրջանում տնտեսական աճի տեմպերի անկմամբ և 2014թ-ի վերջում դրամի արժեզրկման ավելացող ռիսկով: 2016թ-ին նշված ոլորտում աճը որոշ չափով վերականգնվեց և կապեց 3.2%, իսկ 2017-2018թթ. աճը զգալի թափ հավաքեց:

2018թ. կիսամյակային ՀՆԱ-ի աճին նպաստող երկու հիմնական ոլորտների՝ մշակող արդյունաբերության և առևտրի աճը փոխկապակցված է **արտաքին առևտրի** ծավալի աճի հետ: 2016թ. սկիզբ առած՝ արտաքին առևտրի զգալի աճը շարունակվում էր նաև 2018թ. առաջին կիսամյակում: Մինչ այդ, 2014-2015թթ ընթացքում, զգալի անկում էր նկատվել (պայմանավորված Ռուսաստանի տնտեսական վիճակով, մետաղների գների անկմամբ և տարածաշրջանում արժույթների արժեզրկմամբ): 2018թ. առաջին կիսամյակում գրանցվեց ապրանքների արտահանման 20% և ներմուծման 33.9% աճ: Մասնավորապես, արտահանումն աճեց 20%-ով՝ պահպանելով երկնիշ տեմպերը, իսկ ներմուծումն ավելացավ ևս 33.9%-ով՝ շարունակելով նախորդ տարվա վերականգնման միտումները: Այդուհանդերձ, ներմուծման արտահանման հանդեպ ավելի բարձր աճի պայմաններում սկսում է կրկին վատանալ առևտրային հաշվեկշռի պակասորդը:

Հայաստանի **արտաքին պարտքը** 2017թ. կապում էր 5,495 մլն ԱՄՆ դոլար (14.3%-ով ավել, քան 2016թ.), ինչը ՀՆԱ-ի 47.5%-ն էր (2016թ. 35.5%-ի համեմատ): Ընդ որում, արտաքին պետական պարտքի 89.1%-ը կառավարության պարտքն է, 10.9%-ը՝ Կենտրոնական բանկինը: Տարվա սկզբում կառավարությունը նախատեսում էր 2018թ. ընթացքում 2%-ով կրճատել պարտքը: 2018թ. առաջին կիսամյակում, արդեն իսկ գրանցվել է արտաքին պետական պարտքի նվազում: Մասնավորապես, կառավարության պարտքը նվազել է 14.3 մլն, իսկ Կենտրոնական բանկի պարտքը 31.4 մլն դոլարով: Մինևույն ժամանակ, 2018թ. առաջին կիսամյակում որոշակի նվազում է նկատվում արտարժույթային պետական պահուստների ծավալում՝ հունիսի դրությամբ կապմելով 2.0 մլրդ ԱՄՆ դոլար: Չնայած

2017թ. դեկտեմբերի համեմատ 2018թ. հունիսին ծավալը նվազել է ավելի քան 300 մլն ԱՄՆ դոլարով, սակայն, այն նույն մակարդակի է, ինչ 2017թ. հունիսին:


2017թ. Հայաստանը շարունակում էր ակտիվորեն **համագործակցել միջազգային կառույցների հետ** և տեղաբաշխել ներգրավված միջոցները (ՀԲ, Արժույթի միջազգային հիմնադրամ, ԱԶԲ, ԵՄ): Մասնավորապես, 2017թ. ՀԲ աջակցությամբ իրականացվում էր ավելի քան 20 նախագիծ տնտեսության տարբեր բնագավառներում՝ ճանապարհաշինություն, էներգետիկա, գյուղատնտեսություն, կրթություն, առողջապահություն, ոռոգման համակարգեր, գյուղական համայնքների վարգացում, հանրային կառավարում և դատական համակարգ: Ասիական վարգացման բանկի մշակած՝ 2017-2019թթ. երկրի գործառնությունների բիզնես պլանը (ԵԳԲՊ) կապմվել է այնպես, որ ներդաշնակ լինի ՀՀ 2014-2025թթ. վարգացման ռազմավարությանը: ԵԳԲՊ-ն համահունչ է ԱԶԲ-ի 2020թ. Ռազմավարության միջնաժամկետ գնահատմամբ նախանշված առաջնահերթ խնդիրներին, ինչպես նաև ԱԶԲ-ի մշակած՝ Հայաստանի՝ 2014-2018թթ. գործընկերության ռազմավարությամբ սահմանված առաջնային նպատակներին: Հայաստանում ՎԶԵԲ-ի քաղաքականությունն ուղղված է հետևյալ ռազմավարական նպատակների իրականացմանը՝ մասնավոր հատվածի մրցունակության բարձրացում կարողությունների ամրապնդման, ընկերությունների թափանցիկության բարձրացման և գործարար միջավայրի բարելավման միջոցով, կապիտալ շուկաների վարգացում, ազգային արժույթով ֆինանսավորման խրախուսում, կայուն և առևտրայնացված կոմունալ ծառայությունների վարգացում:

Վերջին տարիներին շարունակվում են ՀՀ-ում **ներդրումային և գործարար միջավայրի** բարելավմանն ուղղված միջոցառումները, որոնց արդյունավետությունը դեռևս կարելի է գնահատել միջազգային կապակերպությունների տարբեր վականշներով: Մասնավորապես, Ըստ Համաշխարհային բանկի Doing Business 2018 Վեկույցի՝ Հայաստանը զբաղեցնում է 47-րդ դիրքը 190 երկրների շարքում: Նախորդ տարվա համեմատ որոշ չափով բարելավվել է Distance to Frontier ցուցանիշը (72.51՝ 2017թ. 71.92 համեմատ): Հայաստանը 6 կետով բարելավել է իր դիրքը Համաշխարհային տնտեսական ֆորումի 2017-2018թթ. մրցունակության ինդեքսում՝ զբաղեցնելով 73-րդ հորիզոնականը նախորդ տարվա 79-ի համեմատ: Heritage Foundation հետազոտական կենտրոնի 2018թ. տնտեսական ազատության ինդեքսում Հայաստանն զբաղեցնում է 44-րդ հորիզոնականը և 20-րդը՝ տարածաշրջանում:

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԴԻՐՔԸ ԸՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վերջին երեք տարիների ընթացքում Բանկը ցուցաբերել է բարձր աճի ցուցանիշներ՝ Վճարված գերազանցելով բանկային ոլորտի միջին ցուցանիշները: Չնայած որ որոշ ցուցանիշներով Բանկը գրանցել է որոշ ցուցանիշներով աճի դանդաղում կամ նվազում, այնուամենայնիվ Վճարված տարբերությամբ առաջատարի դիրքերը պահպանվել են:


Հիմնական ֆինանսական ցուցանիշների տարեկան աճը:
2015-2018 միջին տարեկան աճը CAGR
 2018 թ. հունիսի 30 -ի տվյալներով



2018 թ. առաջին կիսամյակի արդյունքներով Բանկը բացարձակ առաջատար է շուկայում կապիտալի, շահույթի, ակտիվների, վարկերի և պարտավորությունների ցուցանիշներով: Վերջին 3.5 տարվա ընթացքում (2018 թ. հունիս – 2014 թ. դեկտեմբեր) գրանցելով կապիտալի ավելի քան 101% աճ՝ Բանկն այժմ ունի բանկային ոլորտի ընդհանուր կապիտալի 10.1% մասնաբաժին: Նույն ժամանակահատվածում Բանկն ունեցել է մոտ 74% ակտիվների աճ և 70.2% պարտավորությունների աճ, որոնց մասնաբաժինները համապատասխանաբար կազմել են 15.4% և 16.1%: Համանման աճ է արձանագրվել վարկերի և հաճախորդների հանդեպ պարտավորությունների (թե ներառյալ Բանկի կողմից թողարկված արժեթղթերը, թե առանց դրանց) գծով: Մասնավորապես նշված ժամանակահատվածում վարկերն աճել են 72.1%՝ գրանցելով 17.3% շուկայական մասնաբաժին 2018 թ. հունիսի դրությամբ, իսկ հաճախորդների հանդեպ պարտավորությունները 68.4% (նույն ցուցանիշը Բանկի թողարկված արժեթղթերը ներառյալ 91.4%)՝ գրանցելով 13.8% շուկայական մասնաբաժին (համապատասխանաբար 14.7% Բանկի թողարկված արժեթղթերը ներառյալ):

Հիմնական ֆինանսական ցուցանիշների աճը վերջին 3.5 տարվա ընթացքում

(2018 թ. հունիսի 30 -ը 2014 թ. դեկտեմբերի 31-ի համեմատ)




► 2015 թ. Նոր Ներդրման շնորհիվ գրավելով շուկայի առաջատարի դիրքեր ընդհանուր կապիտալով Բանկը շարունակեց վարճացնել իր առաջատարի դիրքը 2016 և 2017 թթ: Այնուհետև 2018 թ. առաջին եռամսյակում կապիտալի ևս մեկ ավելացման արդյունքում կապիտալի աճը 2018 թ. հունիսի դրությամբ կազմեց 25.8% կամ 17.5 մլրդ ՀՀ դրամ: Ընդհանուր կապիտալով Բանկի շուկայական մասնաբաժինը կազմել է 11.7% 2017 թ. 10%-ի փոխարեն: Բանկային համակարգի կապիտալի ընդհանուր աճը կազմել է 9.3%:


► 2018 թ. առաջին կիսամյակի տվյալներով Բանկի շահույթը Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 77.4%:

► Ամերիաբանկի ակտիվների եկամտաբերության (ROA) և կապիտալի եկամտաբերության (ROE) ցուցանիշները չգալիորեն գերազանցում են բանկային համակարգի միջին ցուցանիշները. Բանկն առանձնակի ուշադրություն է դարձնում շահութաբերությանը:

**Կապիտալի
եկամտաբերության
դինամիկան**



**Ակտիվների
եկամտաբերության
դինամիկան**



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԻԶՆԵՍ ՄՈԴԵԼԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

2017 թ. և 2018 թ. կեսը բավական հաջող ընթացք ունեցան Ամերիաբանկի համար: Բանկն ամրապնդեց իր դիրքը ՀՀ առաջատար բանկերի շարքում որպես կայուն, ժամանակակից, իրացվելի, արագ աճող և մրցունակ ֆինանսական հաստատություն՝ հետագա աճի և վարճացման հսկայական ներուժով:

ռանձնակի ուշադրություն դարձնելով սպասարկմանը և որակին՝ բանկն արդեն իսկ ամուր դիրք է գրավել որպես առաջատար ըստ նորարարության և սպասարկման չափանիշների: Բանկը շարունակ կատարելագործում է աշխատանքի կազմակերպման, կորպորատիվ կառավարման և հաճախորդների սպասարկման համակարգը և մոտեցումները, ձգտում ընդլայնել առաջարկվող ծառայությունների և պրոդուկտների ցանկը, ներգրավել հմուտ ու արհեստավարժ անձնակազմ և ապահովել պահանջվող ռեսուրսների մշտական առկայությունը: Ամերիաբանկը վերահաստատում է իր որդեգրած ռազմավարությունը՝ դառնալ ունիվերսալ բանկ: 2018 թ. առաջին 6 ամիսների ընթացքում նույնպես կատարվել է մեծ աշխատանք այս ուղղությամբ, Բանկն ընդլայնեց իր մանրածախ ծառայությունների ցանկը, շարունակեց ներդրումներ կատարել մասնաճյուղային և բանկոմատային ցանցի ընդլայնման ուղղությամբ, մանրածախ գործառնություններ դեպարտամենտի կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ակտիվացավ մանրածախ ուղղություն:

Ռազմավարության գլխավոր խնդիրն է Բանկի առաջատար դիրքերի հետագա պահպանումը և գործունեության բոլոր ուղղություններով վարճացումը, մասնավորապես.

- Լինել բացարձակ առաջատարը սպասարկման որակով՝ շարունակելով 2008թ. որդեգրված հաճախորդակենտրոն քաղաքականությունը
- Լինել առաջատարը նորարարություններով՝ առաջարկելով լավագույն միջազգային բանկային լուծումները և ժամանակին արձագանքելով հաճախորդի արագ փոփոխվող կարիքներին
- Դառնալ ամենամեծ ունիվերսալ բանկն ըստ ակտիվների՝ պահպանելով կորպորատիվ, մանրածախ և ՓՄՁ պորտֆելների հավասարակշռված կառուցվածք
- Պահպանել բանկային համակարգի առաջատարի դիրքը բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով
- Բարձրացնել բանկի ֆինանսական արդյունավետությունը կապիտալի շահութաբերության և ծախսերի ու եկամուտների հարաբերության տեսանկյունից
- Բարձր պահել բրենդի հեղինակությունը և միջոցներ ձեռնարկել բրենդի մասին իրազեկվածությունն ու դրական ընկալումն ավելացնելու նպատակով
- Ընդլայնել ծառայությունների տեսականին՝ հաճախորդների ամենատարբեր կարիքները բավարարելու համար
- Շարունակաբար խթանել հեռահար բանկային ծառայությունները, ներդրումներ կատարել այդ ուղղությունը վարճացնելու համար
- Լայնորեն կիրառել կորպորատիվ կառավարման լավագույն փորձը


- Զարկ տալ անձնակազմի լոյալությանն ու մոտիվացմանն ուղղված ծրագրերին՝ ներդրումներ կատարելով մարդկային կապիտալի մեջ և պատրաստելով նոր տաղանդների

Առաքելությունը Բարելավել կյանքի որակը՝

- Մեր հաճախորդներին տրամադրելով միջազգային որակի ֆինանսական ծառայություններ և գործարար լուծումներ
- Իրականացնելով հասարակության բարօրության համար նշանակալի բիզնես և սոցիալական ծրագրեր
- Ձևավորելով յուրահատուկ կորպորատիվ մշակույթ և միջազգային ընկերության վարգացման մեր սեփական մոդելը՝ միավորելով հաջողակ մարդկանց
- Շարունակաբար ավելացնելով մեր բաժնետիրական արժեքը Տեսլականը
- Դառնալ ֆինանսական և գործարար լուծումներ տրամադրող միջազգային ընկերություն:
- Լինել թիրախային շուկաների առաջատարն սպասարկման որակով ու արդյունավետությամբ՝ ներգրավելով ընդհանուր արժեքներ կրող բացառիկ մարդկանց:

Մեր առաքելությամբ ու տեսլականով սահմանված խնդիրները լուծելու և մեր ռազմավարական նպատակներին հասնելու համար մենք նախանշել ենք հետևյալ կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը՝

- Ավելացնել ակտիվները, զուտ շահույթը և հաճախորդների բազան
- Ապահովել հիմնական ֆինանսական ցուցանիշների առաջանցիկ աճ, միաժամանակ լինել առաջատար ըստ արդյունավետության ցուցանիշների
- Առանձնակի ուշադրություն դարձնել մանրածախ և ՓՄՁ ծառայություններին, շարունակել վարգացնել ներդրումային բանկային ծառայությունները



- Ընդլայնել քարտային ծառայությունները և դրանց դերը բանկի գործունեության մեջ
- Բարձրացնել սպասարկման որակը
- Զարկ տալ հեռահար սպասարկման լուծումներին, հանդես գալ նոր բանկային և ներդրումային ծառայություններով, նորարար լուծումներով (բազմաֆունկցիոնալ սպասարկման համակարգեր և այլն)՝ միջազգային լավագույն փորձին համահունչ
- Ապահովել ակտիվների արդյունավետ տեղաբաշխում և դիվերսիֆիկացում
- Ներդնել վարկային որոշումների կայացման արդյունավետ գործիքներ (սքորինգ)
- Շարունակաբար բարձրացնել ֆինանսական կայունությունը և հավելյալ ապահովություն ստեղծել բոլոր շահառուների համար՝ վերանայելով ռիսկերի պարամետրերը
- Արդյունավետորեն կառավարել բանկի հիմնական ռիսկերը, ապահովել վարկային ռիսկի ցածր մակարդակ, բարելավել շուկայական, գործառնական և այլ ռիսկերի գնահատման և կառավարման համակարգերը
- Շարունակաբար բարձրացնել անձնակազմի մասնագիտական վարձացումը և մոտիվացումը
- Նախապատրաստել առաջնային հրապարակային տեղաբաշխման ծրագիրը և դառնալ առաջին հայկական բանկը, որը պաշտոնապես կցուցակվի կապիտալի առաջատար միջազգային շուկաներում
- Նպաստել համայնքի աճին և սոցիալական խնդիրների լուծմանը՝ իրականացնելով կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն՝ ուղղված ՓՄՁ-ների և գործարար համայնքի վարձացմանը, ֆինանսական տեխնոլոգիաների վարձացմանը, պրոֆեսիոնալ գիտելիքի տարածմանը երիտասարդների շրջանում, կրթական ծրագրերին, երեխաների առողջությանը և բարեկեցությանը և համայնքի ընդհանուր վարձացմանը

ԿԱՆԽԱՏԵՍԵԼ

ՄՊԱՍՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՊԱՀՈԿԵԼ
ԲԱՑ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԵԼ ՈՒՐՈՒՅՆ
ԱՐԺԵՔՆԵՐՈՎ ՄԹՆՈԼՈՐՏ




ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ամերիկաբանկի Կորպորատիվ կառավարման համակարգը շարունակաբար կատարելագործվում է՝ հիմք ընդունելով ոլորտի լավագույն միջազգային փորձը: Մենք ձգտում ենք ներառել համակարգում այն գործիքները, հսկողական մեխանիզմները և հակակշիռները, որոնք անհրաժեշտ են գործադիր մարմնի, տնօրենների խորհրդի և բաժնետերերի հարաբերություններն արդյունավետ կերպով կառուցելու և կառավարելու համար:

Բանկի կորպորատիվ կառավարման համակարգը ներառում է հետևյալ մարմինները. Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Տնօրենների խորհուրդը, Տնօրենների խորհրդին կից կոմիտեները և Տնօրինությունը:

Բաժնետերերի ընդհանուր ժողովը բանկի կառավարման բարձրագույն մարմինն է, որը կանոնակարգում և ղեկավարում է բանկի գործունեության հիմնական ուղղությունները: Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է հաստատել բանկի ռազմավարական վարձագման վերաբերյալ բոլոր առանցքային որոշումները:



ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է բանկի երկարաժամկետ զարգացումն ապահովելու համար: Այն սահմանում է բանկի ռազմավարությունն ու հիմնական արժեքները և վերահսկում ղեկավարության գործունեությունը: Խորհրդի նպատակն է ապահովել բաժնետերերի ներդրումների առավելագույն արժեքը և միաժամանակ պաշտպանել այլ շահագրգիռ անձանց շահերը: Խորհրդի հիմնական խնդիրներից մեկն է ներքին հսկողության արդյունավետ համակարգի ներդրումը, բանկի գործունեության հետ առնչվող ռիսկերի պատշաճ վերահսկումն ու ռիսկերի «ախորժակի» սահմանումը: Էական ռիսկերի, այդ թվում՝ սոցիալական, բնապահպանական և էթիկական ռիսկերի բացահայտումը, դրանց գնահատումը և կառավարումը բանկում կրում են շարունակական բնույթ: Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի և հսկողության ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի մշակման համար, իսկ բանկի ղեկավարությունն ստանձնել է դրանց ներդրման, իրականացման ու պահպանման պարտականությունը: Ներքին հսկողության համակարգերի և դրանց արդյունավետությունը գնահատելու պատասխանատվությունը նույնպես կրում է խորհուրդը: Խորհուրդը պարտավոր է մշտապես ապահովել իր աշխատանքի պատշաճ կատարման համար անհրաժեշտ գիտելիքի և հմտությունների համապատասխան պաշար: Արդյունավետության տեսանկյունից առանցքային դեր է խաղում տեղեկատվության ու ղեկավարման գործընթացի հասանելիությունը բոլոր անդամների համար: Խորհրդի բոլոր անդամները մշտապես ձգտում են ապահովել իրենց մասնակցությունը բոլոր նիստերին, եթե ոչ առկա, ապա հեռակա կարգով: Բանկում ներդրվել է հատուկ խորհրդի անդամների համար նախատեսված ներքին էլեկտրոնային հակակարգ՝ պորտալ, որի միջոցով խորհրդի անդամները և նրանց օգնականները շփվում են, համագործակցում, մասնակցում տնօրենների խորհրդի առօրյա աշխատանքին և մեկ վայրում համակարգում բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ արձանագրությունները, շնորհանդեսները, հաստատումները և հաշվետվությունները: Համակարգին կարելի է միանալ ամենատարբեր սարքերի միջոցով, և տնօրենների խորհրդի անդամները կարող են խորհրդի նիստերին և քննարկումներին մասնակցել աշխարհի ցանկացած կետից: Խորհրդի անդամները և նախագահը հաճախակի այցելում են բանկ և շփվում բոլոր օղակների աշխատակիցների հետ, ինչը նրանց հնարավորություն է տալիս տեղում ծանոթանալ ընկերության մշակույթին, արժեքներին ու գործնական համատեքստ ստեղծում նիստերի ընթացքում քննարկվող տեղեկությունների համար: Իր պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների ընթացքում խորհուրդն ուսումնասիրում է ղեկավարության բոլոր գործողությունները՝ դրանց հիմնավորվածությունը գնահատելու նպատակով: Այդ հարցում հատկապես կարևոր դեր է խաղում խորհրդի նախագահը, ով հնարավորություն է տալիս խորհրդի բոլոր անդամներին արտահայտել իրենց դիրքորոշումը: 76 Ամերիաբանկի տնօրենների խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է տնօրենների խորհրդի կանոնակարգով, որով սահմանվում են խորհրդի գործունեության հիմնական նպատակներն ու խնդիրները, իրավասությունների շրջանակը, նիստերի նախապատրաստման, իրավիճման և վարման կարգը: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից և չի կարող 5 տարուց պակաս և 10 տարուց ավել լինել, ընդ որում տնօրենների խորհրդի նախագահն ու անդամներն ունեն վերընտրվելու իրավունք: Բանկի այն բաժնետերերը, որոնք տիրապետում են բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավել տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել բանկի տնօրենների խորհրդի կազմում կամ խորհրդի կազմում նշանակել իրենց ներկայացուցչին: Փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը կարող են միավորվել և խորհրդի կազմում ընդգրկվել իրենց միասնական ներկայացուցչին: Խորհրդի կազմը, անդամների թիվը և որակավորումը,

ինչպես նաև նրանց փոխլրացնող փորձառությունն ու հմտություններն անմիջականորեն անդրադառնում են խորհրդի արդյունավետության վրա: Խորհուրդը պարբերաբար անդրադառնում է այս հարցին հասկանալու համար, թե ինչպիսի մարդիկ են մեզ անհրաժեշտ ներկայում և կարող են անհրաժեշտ լինել ապագայում՝ հաջողության հասնելու համար: Գիտակցելով բազմազան հմտություններ և գիտելիքը մեկտեղելու բոլոր առավելությունները՝ մենք մեր տնօրենների խորհրդում ընդգրկել ենք բանկը հավուր պատշաճի ղեկավարելու համար անհրաժեշտ ամենատարբեր ունակություններ և փորձառություն ունեցող մարդկանց: Խորհրդի նոր անդամներ ներգրավելիս՝ մենք հաշվի ենք առնում աշխարհագրական բազմազանությունը, բանկային գործի, ակտիվների կառավարման, խորհրդատվության, ֆինանսների և միջազգային բիզնեսի ոլորտներում հարուստ մասնագիտական փորձը: Խորհրդի համար կարգային պլանավորման նպատակն է խորհրդի և տնօրինության համար մշտապես ապահովել համապատասխան հմտություններով և փորձառությամբ մարդկային ռեսուրսներ: Մենք առաջնորդվում ենք հետևյալ սկզբունքով. չնայած նոր մարդիկ կարող են նոր շունչ հաղորդել ամբողջ գործընթացներին և հանդես գալ նոր գաղափարներով՝ մենք բարձր ենք գնահատում նաև բանկում բազմամյա փորձ ունեցող անդամներին, ովքեր առավել խոր գիտելիք և պատկերացում ունեն բանկի ամեն մի գործընթացի մասին: Խորհրդի արդյունավետ աշխատանքը բանկի հաջողության հիմնական գրավականներից է: Բանկը մշտապես իրականացնում է տնօրենների խորհրդի անդամների վերապատրաստման ծրագիր, որը հատուկ մշակված է ըստ նրանցից յուրաքանչյուրի պահանջների: Ծրագրի նպատակը խորհրդի անդամների շարունակական մասնագիտական կարգացումն է: Այն հնարավորություն է տալիս ընդլայնել մասնագիտական աշխարհայացքը, ավելի խոր պատկերացում կապել բիզնեսի և շուկաների մասին:

2018թ. հունիսի 30-ի դրությամբ տնօրենների խորհրդի կազմում ընդգրկված էին հետևյալ 6 անդամները.

Անուն, ազգանուն	Պաշտոն	Խորհրդի կազմում առաջին անգամ ընդգրկվելու տարին	Խորհրդի կազմում վերընտրվելու տարին
Անդրեյ Մկրտչյան	Տնօրենների խորհրդի նախագահ	2007թ.	2013թ.
Ռուբեն Վարդանյան	Տնօրենների խորհրդի անդամ	2007թ.	2013թ.
Նուբար Աֆեյան	Տնօրենների խորհրդի անդամ	2010թ.	2010թ.
Ռոբերտ Փոն Ռեկովսկի	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	2012թ.	2012թ.
Պիեռ Գյուրջյան	Տնօրենների խորհրդի անդամ	2016թ.	2016թ.
Օլեգ Ցարկով	Տնօրենների խորհրդի անդամ	2016թ.	2016թ.

Ալեքսեյ Գերմանովիչի, որպես «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի անդամի, լիազորությունները դադարեցվել են սեփական դիմումի հիման վրա: 2018 թվականի ընթացքում նախատեսվում է Բանկի Տնօրենների Խորհրդի համալրում՝ Տնօրենների Խորհրդի անդամների քանակը հասցնելով 7-ի:

2018թ. առաջին կիսամյակում Տնօրենների խորհուրդն ունեցել է 3 առկա և 11 հեռակա նիստեր:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԿՈՄԻՏԵՆԵՐ

Տնօրենների խորհրդին կից գործում են 3 կոմիտեներ.

Առևտրի կոմիտե	Վարձատրության կոմիտե	Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե
<p>Կոմիտեի հիմնական նպատակն է ապահովել բաժնետերերի շահերի պաշտպանությունը, բարձրացնել Բանկում ֆինանսական հաշվետվողականությունը, արտաքին առևտրի, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության արդյունավետությունը:</p>	<p>Կոմիտեի նպատակն է աջակցել Բանկում վարձատրության արդյունավետ համակարգի ձևավորմանը, ապահովել նշված համակարգի որակի գնահատումը, իրականացնել վարձատրության կիրառվող մեխանիզմների մոնիտորինգ՝ լավագույն մասնագետներին ներգրավելու և պահելու, ինչպես նաև չարաշահման ցանկացած հնարավորություն բացառելու նպատակով:</p>	<p>Կոմիտեի նպատակը Բանկի Տնօրենների խորհրդի, վերջինիս կից կոմիտեների և ղեկավարության համար արհեստավարժ, փորձառու մասնագետներից բաղկացած կադրային բազայի ստեղծումն է, ըստ անհրաժեշտության նրանց համապատասխան պաշտոններում ներգրավումը, այդ թվում՝ փոխարինելիության ապահովումն ու կադրային բարելավումը, ինչպես նաև կիրառելի օրենսդրական կարգավորմանը համապատասխան՝ կորպորատիվ կառավարման միջազգային լավագույն փորձի ներդրումը:</p>

Կոմիտեներն իրենց պարտականություններն իրականացնում են ինքնուրույն, սակայն վերջնական հաստատման համար կոմիտեների որոշումները և նախագծերը ներկայացվում են Տնօրենների խորհրդին:

Համաձայն Բանկի ներքին կանոնակարգերի՝ մանրամասն ուսումնասիրման ենթակա ցանկացած հարց սկսվում պետք է քննարկվի կոմիտեների մակարդակով, այնուհետև ներկայացվի Տնօրենների խորհրդին:

Տնօրենների խորհրդին կից կոմիտեների կառուցվածքը 2018 հունիսի 30-ի դրությամբ.

ԿՈՄԻՏԵՆԵՐ	Աուդիտի կոմիտե	Վարձատրության կոմիտե	Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե
Անդրեյ Մկրտչյան			Նախագահ
Ռուբեն Վարդանյան		Նախագահ	անդամ
Նուբար Աֆեյան		անդամ	անդամ
Ռոբերտ ֆոն Ռեկովսկի	անդամ		
Պիեռ Գյուրջյան	Նախագահ		
Օլեգ Ցարկով	անդամ		

2018թ. առաջին կիսամյակի ընթացքում Աուդիտի կոմիտեն ունեցել է 3 նիստ, Վարձատրության կոմիտեն՝ 3 նիստ, Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտեն՝ 1 նիստ:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ


Բանկի ամենօրյա գործունեությունը կառավարում է Բանկի գործադիր մարմինը՝ Տնօրինությունը՝ Տնօրինության Նախագահի գլխավորությամբ:

Տնօրինության կառուցվածքը 2018 թվականի հունիսի 30-ի դրությամբ.

	Պաշտոն	Տնօրինության անդամ նշանակվելու տարին
Արտակ Հանեսյան	Տնօրինության Նախագահ - Գլխավոր տնօրեն	2007
Գևորգ Թառումյան	Գլխավոր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն	2012
Գագիկ Սահակյան	Կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն	2012
Արման Բարսեղյան	Մանրածախ գործառնությունների գծով տնօրեն	2012
Արթուր Բաբայան	Առևտրային գործառնությունների գծով տնօրեն	2013
Տիգրան Զրբաշյան	Չարգացման գծով տնօրեն	2008
Գոհար Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ	2008
Անդրանիկ Բարսեղյան	Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար	2009

ՄՏԱԾԵԼ

ՄԵԿ ԲԱՅԼ ԱՌԱԶ, ԲԱՅԼԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՀԱՄԸՆԹԱՑ ԵՎ ՍՏԵՂԾԵԼ ԱՊԱՀՆՎՈՒԹՅՈՒՆ
ՑԱՆԿԱՑԱԾ ՄԻՋԱԿԱՅՐՈՒՄ



ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

Մակրոտնտեսական գործոններ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տնտեսության և բանկային համակարգի աճը հիմնականում զսպում էին հետևյալ գործոնները՝ քաղաքական բարդ իրավիճակ և դրա հետևանքով առաջացած խնդիրներ, ֆինասական շուկեր և անկայունության մթնոլորտ, օտարերկրյա ուղղակի ներդրումների սակավություն, կուտ մասնավոր փոխանցումների նվազում, բնակչության և բիզնեսի սպասումների անորոշություն, տարածաշրջանում վիճված հակամարտության հետ կապված լարվածություն, LIBOR տոկոսադրույքի աճի ակնհայտ միտում:(ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների մասին առավել մանրամասն իմանալու համար տե՛ս «Արտաքին միջավայր», «Ռազմավարական հաշվետվություն» բաժինները):

Առաջին կիսամյակի ընթացքում մակրոտնտեսական միջավայրի բարելավվումը դանդաղեց երկրորդ եռամսյակում ընթացող քաղաքական պրոցեսների ֆոնին: Ամերիաբանկը, այնուամենայնիվ, գործում էր՝ պահպանելով բոլոր ռիսկերը ընդունելի սահմաններում: Ամենահավանական սցենարներով հաշվարկված սթրես թեստերը և կանխատեսումները ցույց են տալիս, որ տարեվերջին ռիսկի ախորժակի մեծությունը կլինի բանկի կողմից սահմանված առավելագույն մեծության սահմաններում:

2018թ.-ի առաջին կիսամյակում բանկային համակարգի վարկային պորտֆելի որակի վրա ազդող հիմնական գործոններն էին ՀՀ ներքաղաքական իրավիճակը և դրա հետևանքները, ցածր ներքին պահանջարկը, մասնավոր տրանսֆերտների և ուղղակի օտարերկրյա ներդրումների սակավությունը, դրամի արժեզրկման ռիսկերը, որոնք իրենց հերթին կարող են ազդած լինել պահանջարկի, աշխատավարձերի և վարկերի սպասարկման գործակիցների վրա: Էական ռիսկերը կապված էին նաև նավթի և մետաղների գների տատանումների, Ռուսաստանի տնտեսական ճգնաժամի, լարված աշխարհաքաղաքական իրավիճակի, պարտքային ֆինանսական գործիքների միջազգային շուկաներում տոկոսադրույքների փոփոխման անորոշությունների հետ: Հայաստանում տնտեսական ակտիվության ինդեքսի արժեքը 2018թ.-ի առաջին վեց ամիսների համար նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կապմեց 108.9%, ՀՆԱ-ի աճը 2018թ.-ի առաջին եռամսյակի համար՝ +9.6%:

2018թ.-ի առաջին կիսամյակում բանկը չգերապանցեց նախանշված ռիսկի ախորժակը: Ավելին, չօգտագործված պաշարը կապմել է ընդհանուր սահմանաչափի 55.7%-ը, փաստացի վնասը ամբողջությամբ փոխհատուցվել է բանկի կապիտալի հաշվին, և կապիտալի համարժեքության ցուցանիշը ողջժամանակահատվածում ընդունելի մակարդակի վրա էր: 2018թ.-ի առաջին կիսամյակում ռիսկի հիմնական աղբյուրը վարկային ռիսկն էր: Ռիսկի այլ աղբյուրներով պայմանավորված վնասը չի ունեցել էական ազդեցություն Բանկի ֆինանսական վիճակի վրա:

Մակրոմիջավայրի ռիսկեր

<p>Ռիսկեր և անորոշություններ</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տնտեսության և բանկային համակարգի վրա ապդող հիմնական գործոններն էին քաղաքական իրավիճակը և դրանով պայմանավորված անորոշության մթնոլորտը, , օտարերկրյա ուղղակի ներդրումների պակասը, մասնավոր փոխանցումների կրճատումը, տարածաշրջանում պինված հակամարտության վտանգը:</p>	<p>Մակրոտնտեսական ցուցանիշներ</p> <p>ՀՆԱ-ի աճ 9.6% (առաջին եռամսյակ)</p> <p>Սպառողական գների ինդեքս 100.9% (տարեսկզբից մինչև հունիս, Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)</p> <p>Ուղղակի օտարերկրյա ներդրումներ 33% (առաջին եռամսյակ)</p> <p>Զուտ մասնավոր փոխանցումների -10.7% (տարեսկզբից մինչև հունիս, Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)</p> <p>ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները</p> <p>Չաշխատող վարկեր՝ 5.37%</p> <p>Կապիտալի համարժեքության գործակից՝ 18.2%</p> <p>Կապիտալի եկամտաբերություն՝ 10%</p> <p>Իրացվելիության գործակիցները համարյա երկու անգամ գերապանցել են նորմատիվները:</p> <p>Ընդհանուր կապիտալն աճել է 4.4%-ով:</p>	<p>Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը</p> <p>Ելնելով 2018թ. միտումներից և սպասումներից՝ բանկը.</p> <ul style="list-style-type: none"> ▶ Սահմանեց մակրո ռիսկերի և մակրոտնտեսական միջավայրի պայմաններում վարկավորման առավել նպատակահարմար ռեժիմներ՝ 2018թ. 1-ին կիսամյակի համար նախանշելով լավատեսական ռեժիմ ▶ Պարզեցրեց վարկավորման գործընթացը պարտաճանաչ վարկառուների համար ▶ Ջանքերն ուղղեց խնդրահարույց վարկերի վերադարձին և ռիսկային վարկերի մոնիթորինգին ▶ Ընդլայնեց վարկային պրոդուկտների տեսականին, ավելի բազմազան դարձնելով այն և ներգրավելով հաճախորդների նոր խմբեր ▶ Բանկի ներսում ստեղծեց աշխատանքային խմբեր և գործընթացներ, որոնց աշխատանքի նպատակն էր քաղաքական անորոշությունների և իրավիճակի անկայունացման պարագայում ի հայտ գալիք ռիսկերի պայումը:
---	---	--

<p>Ռիսկեր և անորոշություններ 2018թ. 1-ին կիսամյակում բանկը շարունակում էր գործել լավատեսական մակրոտնտեսական ռեժիմի և միջին վարկային ռիսկի պայմաններում: Սկսած 2016թ. 2-րդ կեսից բանկի վարկային ռիսկի ցուցանիշները դրսևորում էին բարելավման միտում, որը պահպանվեց նաև 2018թ. 1-ին կիսամյակում :</p>	<p>Ռիսկի հիմնական ցուցանիշներ Ամերիաբանկի չաշխատող վարկերի ցուցանիշը 2018թ. 1-ին կիսամյակի վերջով կազմել է 6.2%՝ որոշակիորեն գերազանցելով բանկային համակարգի միջին ցուցանիշը՝ 5.37%: Կորպորատիվ խնդրահարույց վարկերի ցուցանիշը 6.5% էր, մանրածախ վարկերինը՝ շուրջ 5%: Վարկային ռիսկի արժեքը կազմեց վարկային պորտֆելի 0.67%-ը: Վարկերի հնարավոր կորուստների պահուստները ծածկել են դեֆոլթ գնացած վարկերի ընդհանուր ծավալի 104.3%-ը (առանց գրավադրված գույքի արժեքի ճշգրտումների): Ոլորտային կենտրոնացման մակարդակը ցածր էր, մեկ ոլորտում կենտրոնացման առավելագույն ցուցանիշը մեծածախ առևտրի ոլորտում էր և չէր գերազանցում վարկային պորտֆելի 20%-ը : Վարկային պորտֆելիների որակը 2018թ. 1-ին կիսամյակի ընթացքում բարելավվեց գրեթե բոլոր ոլորտներում, բացառությամբ գյուղատնտեսության ոլորտի, որտեղ որակի բարելավման բացակայությունը պայմանավորված էր մեկ հաճախորդի ապդեցությամբ: Ռիսկի հիմնական ցուցանիշներն էական փոփոխությունների չեն ենթարկվել իսկ ժամկետանց վարկերի ծավալը զգալիորեն նվազեց և կիսամյակի ընթացքում նույնպես պահպանեց դրական միտումը:</p>	<p>Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը ► Կայուն ֆինանսական ցուցանիշներ ունեցող հաճախորդների վարկավորման խրախուսում, ցածր ռիսկային հաճախորդներ ներգրավելու նպատակով որոշ պարամետրերի պարվեցման քաղաքականության պահպանում ► Աքորինգի վրա հիմնված մանրածախ վարկավորման նոր համակարգի ներդնում թվային կապուլդիներով վարկավորում իրականացնելու համար, և համապատասխան ռիսկի ավտորժակի սահմանում: Վարկատեսակների և հաճախորդների դիվերսիֆիկացում:</p>
--	--	---

Շուկայական ռիսկեր

<p>Ռիսկեր և անորոշություններ</p> <p>2017թ.-ին իրավիճակը շուկայում բարելավվել էր, սակայն 2018թ.- առաջին կիսամյակում դեռևս պահպանվում էր անորոշության բարձր մակարդակը: ՀՀ ԿԲ-ի գործողությունների շնորհիվ ՀՀ դրամի փոխարժեքը քաղաքական անորոշության պայմաններում բավականին կայուն էր, սակայն դրամի արժեզրկման վտանգը դեռ չի անցել: Վստահության և արագ իրացվելիության պակասի պատճառով գնման և վաճառքի սփրեղը մնում է բարձր: Տոկոսադրույքների վարքագիծը ՀՀ շուկայում տարբերվում էր միջազգային տոկոսադրույքների վարքագծից: ԱՄՆ գերատեսչությունների քաղաքականությունը ֆինանսական ոլորտում հանգեցրեց նրան, որ միջազգային շուկայում տոկոսադրույքները բարձրացան, ինչի արդյունքում LIBOR-ի դրույքն արձանագրել է ամենաբարձր մակարդակը 2009թ-ից ի վեր: Տնտեսական վիճակի և մրցակցության արդյունքում թե՛ ավանդների, թե՛ վարկերի տոկոսադրույքները տեղական շուկայում նվազման միտում էին դրսևորում, ինչն ուղղակիորեն անդրադառնում էր բանկի ներքին եկամտաբերության մարժայի վրա: Հեջավորման հնարավորությունները</p>	<p>Ռիսկի հիմնական ցուցանիշներ</p> <p>Շուկայական ռիսկերից առաջացող կորուստը/ախորժակը 2018թ.-ի առաջին կիսամյակի արդյունքներով եղել է բանկի կողմից նախանշված ընդունելի սահմաններում: Տարվա ընթացքում բաց արտարժույթային դիրքը հիմնականում երկար էր պայմանավորված դոլարի արժևորման ակնկալիքներով, խնդրահարույց վարկերի աճի ռիսկերով և վարկային պորտֆելի դոլարացման բարձր մակարդակով: Տոկոսադրույքի, այդ թվում՝ լողացող (LIBOR-ի նկատմամբ զգայուն) տոկոսադրույքի ձեռքբառնալիս բանկի համար շուկայական ռիսկերի առաջացման հիմնական աղբյուրն էր: Սակայն սթրես-թեստերի հիման վրա հաշվարկված վնասը և փաստացի ցուցանիշները չգերազանցեցին սահմանված ռիսկի ախորժակը: Արժեթղթերի պորտֆելի շուկայական ռիսկն ընդունելի էր և ռիսկի ախորժակի սահմաններում՝ շնորհիվ միջինդուրացիայի (~3.5 տարի) և ծավալի: Բանկի արժեթղթերի պորտֆելը հիմնականում բաղկացած է ՀՀ պետական պարտատոմսերից (92%): Պորտֆելի 2%-ը կազմում են բարձր վարկանիշ ունեցող արտասահմանյան սուվերեն պարտատոմսերը:</p>	<p>Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը</p> <ul style="list-style-type: none"> ▶ Ռիսկի ախորժակի/հնարավոր կորուստների կառավարումն իրականացվում էր հատուկ սթրես-թեստերի, առկա միտումների մոնիթորինգի և գնահատումների միջոցով: ▶ Օրական կտրվածքով հատուկ հսկողության տակ էին պահվում բաց արտարժույթային դիրքերը: ▶ Ներքին եկամտաբերության մարժան կառավարվում էր ձեռքբառնալիս սահմանաչափերի և սթրեսային սցենարների հիման վրա որոշված վնասի սահմաններում: Պարբերաբար հաշվարկվում էին և մոնիթորինգի ենթարկվում տոկոսադրույքների ակնկալվող բացասական փոփոխությունները: Հեջավորման բարձր արժեքի հետևանքով ռիսկի նվազեցման հնարավորությունները սահմանափակ էին, բայց և այդպես, ռիսկը նվազեցվում էր սվոփերի, վարկավորման և ֆինանսավորման տոկոսադրույքների ակտիվ կառավարման միջոցով: ▶ Բանկը մշակեց և ներդրեց ներդրումային գործառնությունների կատարման որոշման կայացման/գործարքի հաստատման իրավասությունների նոր կառուցվածք, որը միտված է գործընթացը դարձնել ավելի էֆֆեկտիվ և արդյունավետ:
--	--	---

<p>սահմանափակ էին հեջավորման և տեղական շուկայում առկա գործիքների գնի պատճառով: Չնայած դրան՝ բաց դիրքերը կառավարվում էին բանկի ռիսկի ախորժակի սահմաններում: Պարտքային շուկայում գործող տոկոսադրույքները գտնվում էին ԱՄՆ դոլարի փոխարժեքի անկման, գլոբալ տոկոսադրույքների բարձրացման և դեպի արժեթղթերի շուկա կապիտալի հոսքի ապդեցության տակ: Դրամի կայուն փոխարժեքի ֆոնին հայկական արժեթղթերը շարունակում են բարձր արդյունավետություն դրսևորել:</p>		
---	--	--

Գործառնական ռիսկեր

<p>Ռիսկեր և անորոշություններ Բանկային համակարգում ամբողջ աշխարհով մեկ զգալիորեն աճել է կիբերհանցագործությունների թիվը, ինչը կարող է խոչոր ֆինանսական վնասի պատճառ դառնալ, ինչպես նաև խաթարել գործառնությունների իրականացումը և վտանգել գործունեության անընդհատությունը: Համացանցի և բջջային հավելվածների միջոցով իրականացվող առևտրի ծավալի աճին զուգահեռ ողջ աշխարհով մեկ աճում է նաև քարտային խարդախությունների թիվը:</p>	<p>Ռիսկի հիմնական ցուցանիշներ Գործընթացների կարգավորման և վերահսկման շնորհիվ բանկը գործառնական ռիսկը պահում է ցածր մակարդակի վրա: 2018թ. 1-ին կիսամյակի կրած ընդհանուր գործառնական վնասը չի գերազանցել կապիտալի 0.001%-ը: Վնասի հիմնական մասը գրանցվել է հաճախորդներ, բանկային գործիքներ և բիզնես փորձ խմբում, : Տարեցտարի ավելանում է Ամերիաբանկի հեռահար բանկային ծառայություններից օգտվող</p>	<p>Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը Գործառնական ռիսկերի կառավարման նպատակով բանկում գնահատվել և վերագնահատվել են մի շարք գործընթացներ և համակարգեր: Գնահատումների արդյունքում առանձնացված բարձր ռիսկերի համար առաջարկվել և ներդրվել են ռիսկերը կանխարգելող և/կամ նվազեցնող լուծումներ: Կատարելագործվել է գործառնական ռիսկերի/պատահարների և կորուստների տվյալների շտեմարանի ավտոմատացված համակարգը Բանկի գործառնական ռիսկերը վերահսկվում էին համապարփակ և</p>
--	--	--

<p>Անվտանգությունը դառնում է հիմնախնդիր աշխարհի բոլոր ֆինանսական հաստատությունների համար:</p>	<p>հաճախորդների և քարտապանների թիվը: Գործառնական վնասն ընդունելի մակարդակում էր, և ցուցանիշի վատթարացում չի ակնկալվում: Բանկի բոլոր համակարգերը գործում են ցածր ռիսկի պայմաններում:</p>	<p>համակարգված ձևով: Ուշադրության կենտրոնում էին ներքին SS համակարգի անվտանգությունը, անձնակազմի ուսուցումը, որոշումների կայացման աստիճանակարգումը և իրավասությունների բաշխումը: Բանկը ձեռք է բերել համապարփակ և արդյունավետ ապահովագրություն (\$ֆինանսական հաստատությունների համապարփակ ապահովագրություն, կանխիկ միջոցների, գույքի, բանկոմատների, երրորդ անձանց պատասխանատվության ապահովագրություն և այլն):</p>
---	---	--

Իրացվելիության ռիսկ

<p>Ռիսկեր և անորոշություններ Իրացվելիության մակարդակը ՀՀ բանկային համակարգում շատ բարձր է: Դրան նպաստեց կապիտալի ներհոսքը ի պատասխան ՀՀ ԿԲ-ի պահանջի, որի նպատակն էր բանկային համակարգի հուսալիությունը բարձրացնելն ու դրամի պահանջարկը բարելավելը: Իրացվելիության ավելցուկն Անդրադարձավ թե՛ ներգրավված, թե՛ տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների վրա, ինչպես նաև վարկային ռիսկի պարամետրերի վրա: Տոկոսադրույքի հանդեպ պայման ակտիվների և պարտավորությունների կարճ դիրքը, որը բնորոշ է ցանկացած</p>	<p>Ռիսկի հիմնական ցուցանիշներ Իրացվելիության բոլոր գործակիցներն անգամ ամենաբացասական սթրես-սցենարների դեպքում համապատասխանում էին ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջներին: 2018թ.-ի առաջին կիսամյակում իրացվելիության ռիսկը չնչին էր և չսպվում էր ընդհանուր ռիսկի պարամետրերի համակարգի շրջանակներում:</p>	<p>Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը Բարձր իրացվելի ակտիվները տեղաբաշխման ուղիները բազմապատկերվում են բարձր վարկանիշ ունեցող գործընկերների լայն ցանցի, ինչպես նաև ներդրումային պորտֆելի բազմապատկեցման միջոցով: Բանկն ընդլայնեց իր գործընկերների ցանցը կապեր հաստատելով արտասահմանյան ֆինանսական հաստատությունների հետ, ինչի շնորհիվ բանկի համար հասանելի են դառնում մեծ թվով ֆինանսական գործիքներ և իրացվելիություն ապահովող մեխանիզմներ: Ավանդային բավայի կայունությունը և հետագա աճն ապահովելու համար բանկը</p>
---	---	---

<p>վարձացող երկրում գործող առևտրային բանկին, կարող է էական խնդիրներ առաջացնել շուկայական տոկոսադրույքների կտրուկ բարձրացումների պարագայում, ինչը տնտեսական միջավայրում առկա անորոշությունների տրամաբանական հետևանք կարող է լինել:</p>		<p>սահմանում էր ավանդների տոկոսադրույքները՝ հիմք ընդունելով շուկայում գործող տոկոսադրույքները: Բանկն աշխատել է նաև այլ աղբյուրներից (միջազգային հաստատություններ) երկարաժամկետ ռեսուրսների ներգրավման ուղղությամբ:</p>
---	--	--

Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկեր

<p>Ռիսկեր և անորոշություններ Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարումը գնալով ավելի կարևոր դեր է խաղում հաջողակ ընկերություն հիմնելու և պահպանելու համար: Այն կարևոր է թե՛ բաժնետերերի, թե՛ հաճախորդների, թե՛ ներդրողների, աշխատակիցների ու համայնքի և, իհարկե, շրջակա միջավայրի համար: Ամերիաբանկի գլխավոր նպատակն է համագործակցել այն հաճախորդների հետ, որոնք պատշաճ կերպով կառավարում են շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը: Ավելին, բանկն աջակցում է իր հաճախորդներին շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի համակարգ ներդնելու գործում: Ամերիաբանկի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի</p>	<p>Ռիսկի հիմնական ցուցանիշներ Բանկի վարկային պորտֆելի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը գնահատվել են որպես ընդունելի: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի ավելի քան 80%-ը գտնվում է ցածր և միջին ռիսկի գոտում: «Բարձր Ա» դասի ռիսկային վարկառուներ Բանկի վարկային պորտֆելում առկա չեն: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման և վարկային քաղաքականությունները նպատակ ունեն նվազեցնել ֆինանսավորվող ծրագրերի բացասական ազդեցությունը՝ ֆինանսավորման պայմանների, հրահանգների և նախապայմանների, խորհրդատվության և շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման բարձրակարգ մասնագետների ներգրավման միջոցով:</p>	<p>Ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկված քայլերը Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը կառավարվում էին բանկի վարկային ընթացակարգերին և շրջակա միջավայրի ու սոցիալական ռիսկերի կառավարման գործող համակարգին համաձայն, որը մշակվել է լավագույն միջազգային փորձի հիման վրա (ՎՋԵԲ-ի, ՄՖԿ-ի և ԱՋԲ-ի գործունեության չափանիշներ/պահանջներ): Ցանկացած ծրագիր ֆինանսավորելիս Ամերիաբանկը գնահատում էր տվյալ ծրագրի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը, ուսումնասիրում իրավական փաստաթղթերը, բացահայտում, հսկում և նվազեցնում ռիսկերը և կապում համապատասխան հաշվետվություններ: Գնահատման արդյունքները և բացահայտված անհամապատասխանությունները ներկայացվում են ելրակացության տեսքով,</p>
--	---	---

<p>կառավարման համակարգերը խրախուսում են հաճախորդներին, որ նրանք էլ իրենց բիզնեսը վարեն կայուն և պատասխանատու կերպով: Համակարգը հիմնվում է ՄՖԿ-ի, ՎՋԵԲ-ի և ԱԶԲ-ի գործունեության պահանջների և չափանիշների վրա, որոնք դարձել են վարկավորման ընթացքում շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի գնահատման գլխավոր չափանիշը:</p> <p>Ռիսկերը բացահայտելու համար բանկը կիրառում է տեխնիկական փաստաթղթեր, որոնցով սահմանվում են ընդհանուր և տնտեսության առանձին ձյուղերին բնորոշ օրինակելի գործունեության չափանիշները:</p>		<p>որի հիման վրա վարկային պայմանագրերում ներառվում են պարտադիր պահանջներ շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման վերաբերյալ:</p> <p>Վարկառուների համապատասխանությունը շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման լավագույն փորձին ապահովելու նպատակով 2018թ.-ի առաջին կիսամյակում նույնպես բանկը շարունակաբար կիրառում է բարձր և «բարձր Ա» դասի ռիսկային ծրագրերի (ներառյալ ՀԷԿ-երի) շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգ, որով սահմանվում են այն նորմերը և պահանջները, որոնցով վարկառուները պետք է առաջնորդվեն իրենց գործունեության ընթացքում:</p>
---	--	---

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ամերիաբանկի 2018 թ. երկրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվություններին կարող եք ծանոթանալ այստեղ՝








«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 2,
 Հեռախոս՝ (+37410) 56 11 11, Ֆաքս՝ (+37410) 51 31 33

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍՍԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. «Ամերիաբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Թողարկող/ 2018թ. առաջին կիսամյակի հաշվետվությունում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են և բոլոր էական առումներով համապատասխանում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ԿԲ Կանոնակարգ 4/04-ի պահանջներին:
2. Ներկայացված՝ 2018թ. երկրորդ եռամսյակի աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2018թ. հունիսի 30-ի դրությամբ, ինչպես նաև Թողարկողի գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու ժամանակաշրջանի համար:

Գոհար Խաչատրյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	 (ստորագրություն)
Գագիկ Սահակյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Կորպորատիվ հաճախորդների գծով լիսորեն (պաշտոն)	 (ստորագրություն)
Գրիգոր Պետրոսյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամի ժ/պ (պաշտոն)	 (ստորագրություն)
Արթուր Բաբայան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Առևտրային գործառնությունների գծով լիսորեն (պաշտոն)	 (ստորագրություն)
Արման Բարսեղյան	Տնօրինության անդամ, Մանրածախ գործառնությունների գծով լիսորեն	 (ստորագրություն)


(անուն, ազգանուն)

(պաշտոն)

(ստորագրություն)

Տիգրան Զրբաշյան

Տնօրինության անդամ, Քարգացման
գծով տնօրեն



(անուն, ազգանուն)

(պաշտոն)

(ստորագրություն)

Ստորագրությունները հավաստում են՝

Արտակ Հանեսյան

Տնօրինության նախագահ - գլխավոր
տնօրեն



(անուն, ազգանուն)

(պաշտոն)

(ստորագրություն)

